Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 485 - Ա
որոշման

«ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ՄԵՐ ՏՈՒՆ» ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Դպրոցահասակ տղաների և աղջիկների համապատասխան տարիքային զարգացմանը նպաստելու, պայմանների բարելավման և ինքնուրույն կենցաղավարության հմտություններ ձեռք բերելու համար Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Մեր տուն» մասնաշենքի վերակառուցում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն» (ՍՕԱՐ) հիմնադրամ՝ 150 Ն. Ռադնոր Չեսթեր Ֆ.200, Ռադնոր 19087 Փենսիլվանիա, ԱՄՆ
4.	Ծրագիրը կատարողը	«Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՕԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Քանաքեռ Զեյթուն Թբիլիսյան խճղ. 19 ՀՎՀՀ՝ 00148272)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզի Գյումրի Թամանյան փողոց, 17 շենք Գյումրու «Երեխաների Տուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	12,528,700 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզի Գյումրի Թամանյան փողոց, 17 շենք, ՀՎՀՀ՝ 05521918)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի օգոստոսի 10-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Մեր տուն» մասնաշենքի վերակառուցում՝ 12,528,700 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի օգոստոսի 10-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը և նախատեսվող գինը	Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Մեր տուն» մասնաշենքի վերակառուցման աշխատանքների իրականացում՝ 12,528,700 դրամ առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

29.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ